

**Անուշավան Պետրոսյանի «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՆԱՐՎԵՍԱԸ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐ (ԵՐ., ԵՊՅ, 2012, 302 էջ)**

Հայ գյուղի մուտքը գեղարվեստական գրականություն արդեն սկսվում է Խ. Աբովյանի անվան հետ, որի շնորհիվ գեղարվեստական արձակը վերածվեց ազգագրական ու բանահյուսական նյութերի արտահայտչամիջոցի, անվերապահ կորստից փրկվեց ու մեզ հասավ մշակույթի հարուստ ժառանգություն՝ վերածվելով ազգագրական հետազոտությունների անփոխարինելի սկզբնաղբյուրի: Խ. Աբովյանին հետևեցին Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, գրողների մի ողջ սերունդ, որոնց գրառումները՝ «ազգագրական պատմվածք», «ազգագրական գյուղավեպ» և այլ անուններով, մշակույթի այդ նըշխարները դարձրին համընդհանուր ճանաչման առարկա: Կենդանի իրականությունից գրողները վերցնելով տնտեսական զբաղմունքների, նյութական մշակույթի, ընտանեկան կենցաղի, ծեսերի ու սովորույթների, ծննդյան, հարսանյաց, թաղման արարողակարգերի, ժողովրդական հավատալիքների, տոների, բանարվեստի վերաբերյալ արժեքավոր վկայություններ՝ հարազատ են մնացել տվյալ տարածաշրջանի լեզվին ու բարբառին, տեղական առանձնահատկություններին, կորստից փրկել են հայ էթնիկ հանրության ամենավաղնջական փուլերին վերաբերող բազմաթիվ արժեքներ՝ դառնալով բանահավաք ու բանասաց: Տասնամյակներ շարունակ ինքնատիպ այդ նյութերը դուրս են մնացել ազգագրագետների տեսադաշտից, և չեն դրվել շրջանառության մեջ, չեն մեկնաբանվել ու տիպաբանվել: Առանձին բացառություններով՝ նման իրավիճակը մնաց անփոփոխ մինչև 20-րդ դ. վերջը:

Ա. Պետրոսյանի սույն աշխատությունը կոչված է լրացնելու այս բացը:

Աշխատության մեջ ընդգրկված նյութերը հեղինակը տիպաբանել և ստորաբաժանել է հետևյալ կերպ.

Տնտեսական կենցաղ, որը ներառում է հիմնական, օժանդակ և յուրացնող տընտեսածները: **Երկրագործության** վերաբերյալ վկայություններ. հողի պարբերաբար բաժանում, սերմի ընտրություն, **կաթնավար, դիր դնել**, արտի մի մասը **կորդ թողնել, սրբիչ, հնձավարձ, օրավար, հացփոր, հարակաշ**, հողը **մանկեռել**, բերքահավաք, կալսոց, ամբարում, **քոզար, կորիների պատրաստում, հերկոց, գութնոց, վեցկի, գութն, սայլի մածան, սոնակ** և այլն. դրանց վրա է խարսխված եղել ավանդական երկրագործությունը:

Անասնապահության ձևերի, համագործակցության եղանակների, հոտերն ամառային արոտավայրեր տանելու, սարի կենցաղի կազմակերպման, քարաշեն ու ժամանակավոր (**դագա**) կառույցների, կաթի մշակման, կարագ ու պանիր ստանալու, մթերքները հիմնական բնակավայր տեղափոխելու, աշխատանքի բաժանման, խոշոր եղջերավոր անասուններին անուններ դնելու և այլ հարցերի վերաբերյալ վկայությունները թույլ են տալիս հստակ պատկերացում կազմել հայոց տնտեսական կենցաղի երկրորդ զբաղմունքի վերաբերյալ:

Արհեստագործության ու տնայնագործության մասին գրառումներում հիշատակվում է **սարաջի** (թամբագործ), **սանդերքով, չաք ու անեղով** բուրդ ու բամբակ գզելու, դերձակության, դարբնության, ձիթհանության, ջուլիակության, կտավագործության, հյուսնության, զինագործության, համքարական կազմակերպությունների

մասին: Ընդհանուր գծերով տրված են այդ բնագավառների տեխնիկա-տեխնոլոգիական, սոցիալ-ժիսական առումները: Ուշագրավ են շերամապահության, ձիթահունքայան, մետաքսի ստացման, այգեգործության, այգեկութի, բամբակի մշակման, մեղվապահության, չուխայի միջոցով արջի որսի, ազավների միջոցով ընկույզի ծառեր տնկելու, որսորդության հետ կապված հավատալիքների, հայ առևտրականների խաղացած դերի, առևտրական ուղիների անապահովության, կողոպուտի, սահմանված բարձր հարկերի մասին վկայությունները:

Անզուգական են խավրժիլի, գազպեի առաջացման, առատության մասին կարծիքների, դրանց հավաքման ու մշակման, սննդում ու ժողովրդական բժշկության մեջ օգտագործելու, արտահանելու վերաբերյալ առատ գրառումները:

Նյութական մշակույթի տարրերի վերաբերյալ գեղարվեստական գրականության մեջ առկա վկայությունները չնայած հարուստ չեն, սակայն արժանի են ուշադրության: Բնակելի տունը հայտնի է թոնրատուն, հացատուն, մեծ տուն և այլ անուններով, որոնք ունեցել են բազմաֆունկցիոնալ գործառնություններ: Ծածկը, հողե թմբածև տանիքը, մեծ ու փոքր թոնիրները, պատրիհան-ծալքատեղիները, բուրդակ երդիկը, բուխարին ամբողջացնում են հեռվից ծիծեռնակի բույնին նմանվող հազարաչեն խրճիթի ամբողջական պատկերը: Այդ համալիրի մեջ էր մտնում հյուրասենյակը, բուխարին, մառանը կամ մրգերի պահեստը՝ առաստաղից կախված մրգերի շարաններով, հյուրեր ընդունելու և ճանապարհելու եղանակները, գոմը, մարագը, պարիսպը, որով ամբողջացվում է բնակելի և օժանդակ կառույցների հարաբերակցությունը:

Ավանդական տարագի հիմքում ընկած էր բրդի, բամբակի, բոժոժի, վուշի, կանեփի հումքից ստացված թելերից գործած կտորեղենը: Կոռք բերանը փակված էր տարուբերով, երեսին՝ **գանդրուկ**, ճակատին արծաթե ու ոսկե **չարք**, հագին միմթանա, դերիա, քաթիքա, գլուխները **վրացնակ** շինած: Դաբաղած կաշվից տրեխներ, այծի երկար մազերից աբա, մեջքին գոտի, գլխին գլխարկ, խոզի ամորձիքներից պատրաստված քսակներ կրելը, ոգնու ճարպով հրացան յուղելու կարգը եզակի վկայություններ են ոչ միայն գեղարվեստական, այլև մասնագիտական գրականության մեջ:

Ուտեստի հիմքում ընկած էին մսեղենը, կաթնեղենը, ձավարեղենը, վայրի ուտելի բույսերը: Դրանց պատրաստման ժողովրդական եղանակները գրականության մեջ տրված են մանրամասնորեն: Թիֆլիսի հայերի ավանդական ուտեստը, ջավախքահայերի ուտեստի 15 խմբերը՝ ապուրի 13, յուղեղեն 16, վայրի ուտելի բույսերից պատրաստված 26 կերակրատեսակները, Քանաքեռի բնակչության կողմից կաթի մշակման, մածունի, կարագի, ստացման, թանապուրի պատրաստման եղանակները, մատուցման հերթականությունն ու կարգը: Սեղան նստելու ավանդական կարգը, կանանց և տղամարդկանց առանձին ճաշելը, տոնա-ծիսական և առօրյա ուտեստի վերաբերյալ գրառումները տրված են մանրամասնորեն:

Մեծ ընտանիքի, ընտանեկան կենցաղի, հարսանյաց արարողակարգի վերաբերյալ գրառումները գեղարվեստական գրականության մեջ մեծ տեղ են գրավում: Ընտանիքի անդամների թիվը հասնում էր 60-70 անձի, կար մինչև 20 օրորոց, ընտանիքն ունենում էր երկու գուլթան, տասնյակ գլուխ խոշոր երջերավոր անասուններ: Ընտանիքում **դովլաթ** բաժանողի, հյուրերի ոտքերը լվանալու, անդամների փոխհարաբերությունների, ավագության կարգի, աշխատանքի բաժանման, նահապետի անսահմանափակ իշխանության, ընտանեկան հարաբերությունները կարգավորող սովորության իրավունքի նորմերի վերաբերյալ վկայությունները խիստ կա-

րևորվում են: Նահապետի նկատմամբ ունեցած պատկառանքը, մեծ տիկնոջ կողմից տնտեսությունը վարելը, զավակների մեծարանքը ծնողների հանդեպ համարվում էին մեծ ընտանիքի պահպանման հիմքը: Ընտանեկան կյանքի բարեկեցության հիմնական գործոնը համարում էին ուսումը, դաստիարակությունը և տնտեսությունը:

Նահապետի մահից հետո ընտանիքի գլուխ էր կանգնում նրա ավագ եղբայրը, որի կնոջը կանչում էին մեծ նան, իսկական մորը՝ փոքր նան, հարսին, քանի դեռ ջահել էր, աղջիկ, իսկ տարեց ժամանակ՝ այսինչի թոռ: Երեխաների դաստիարակության հիմքում դնում էին ծնողների գործող բարի օրինակը, նրանց անձնական կյանքը, ծերության ժամանակ երեխան ծնողաց ցուպ դառնալու պահանջը:

Աշխատության էջերում ուշագրավ են **հարսանյաց արարողակարգի** վերաբերյալ վկայակոչումները: Քննադատվում են հարսանիքի յոթ օրվա կարգն ու կատարած մեծ ծախսումները: Առավել ամբողջական են նախահարսանեկան և բուն հարսանեկան ցիկլերի վերաբերյալ գրառումները: **Նախահարսանեկան փուլն** ընդգրկում է ընտրության, խնամախոսության և նշանադրության փուլերը: Ընտրության վերաբերյալ հաղորդումներն ուշագրավ են ու բազմազան. օջախից մի բուռ մոխիր վերցնելը, միջի, օրորոցախազի սովորույթը, առևանգումները, պաչելու միջոցով փոքր աղջիկ-տղաների խմբով ընտրությունը, քաղվոր աղջիկների մածունի կճուճը գողանալը, չափածոյի տեսքով աղջիկ ուզելը, կնոջ ընդգծված դերն այս փուլում: Ազգագրական պատկերներում հիշատակվում է չխոսկանության, բեղով ու մորուքով երդվելու, երիտասարդների առնականությունը խիլ ու ճիլ քոթուկի վրա փորձելու կարգի, բռնի ամուսնությունների, պապի ու բիծու դերի, աղջիկ ընտրելիս ջինսին մեծ տեղ հատկացնելու կարգի մասին: Առավել ամբողջական են **բուն հարսանեկան փուլի** վերաբերյալ վկայությունները: Մինչև 5-6 **պորտ** մերձավորների ամուսնության արգելքը, խախտման դեպքում պարսավելը, հարսանիք հրավիրելու տարբեր եղանակները, որոնց մեջ առանձնանում է ծաղիկներով ու գինիով տները շրջելը և հրավիրելը: Հարսի մեջքը պնդելը, հանդերձներն օրհնել տալը, հարսի ու փեսայի հագուստի կոճակներն արձակելը, գրպաններում մեկական կողպեք գցելը ընդգծվում է հարսանյաց արարողություններում: Գլխատանն արվող հարսանիքը, մատուցվող ճաշատեսակները, կենացները, խրախճանքն ու կատակները, բարշեքը, կամ ոսկոր կտրեքը, եկեղեցական արարողակարգը, կանաչ-կարմիր նարոտ կապելը, թագը դնելը, տղայի տանը հարսի բերանբացեքը, թագուհու գլխին խալաթներ շաղ տալը, չամիչ թափելը, փեսա-հասակակիցներ, փեսա-աներ, փեսա-զոքանչ հարաբերությունները, դրանց աղերսվող տերմիններն ու մեկնությունները մեծ տեղ են գրավում: Մանրամասնորեն թվարկվում է հարսի օժիտի պարունակությունը, գուլպա-տրեխտեն, պղնձե կուժ, ջուր խմելու տոլչա, կարպետ, անկողին, պարանի մի քանի տեսակներ, զոքանչի կողմից փեսային նվիրված տափագործ չուխա ու շավվար, մի զույգ պաճիճ ու կապիճ:

Նստահարսանեկան փուլին վերաբերող հաղորդումները բավական քիչ են: Հարսանիքից միայն 3-4 ամիս հետո հարսը կարող էր այցելել ծնողներին՝ մնալով 3-4 շաբաթ: Նշվում է հարսի **երեսբացուկի** մասին, երբ սկեսուրն ու սկեսրայրը պարտավոր էին հարսին ընծաներ տալ, առանց որի նրա դարձը ծնողների մոտ հնարավոր չէր: Նորափեսան աներոջ տուն էր գնում միայն փեսապատիվ ստանալուց հետո:

Հոգևոր ոլորտի վերաբերյալ գրականության մեջ եղած վկայությունները ընդգրկում են կենցաղի բոլոր բնագավառները, որոնք ներկայացվում են հետևյալ հերթա-

գայությանը. մինչև ցանելը սերմը եկեղեցում օրհնել տալը, Ամենակալին ուղղված աղերսները, հնձի պարը, հապա անելը, քաշող անասուններն առաջին անգամ գոմից հանելիս ճակատներին ձու կոտրելը, դժվար ծնունդի ժամանակ արորը տանիք հանելը և մասերն իրարից անջատելը, բուրբ փակված դռները, արկղները, լուսանուտները բացելը: Որպես անձրևաբեր ծեսեր հիշատակվում են օտարի գանգերը ջուրը գցելը, որոշ կենդանիներին լողացնելը, երեխայի ուշ քայլելիս շան լակամանում լողացնելը, սպանության դեպքում սպանողի՝ տուժողի ընտանիք ներկայանալը ճերմակ կտավով ու գործիքով (պատանք), կամ տուժողի տանը պատանք կարել տալը, հնձվոր աղջիկների մածունի կճուճները գողանալը որպես աղջկա ընտրություն: Երբ աղջիկը խախտելով կարգը՝ փախչում էր սիրած տղայի հետ, անիծում էին. քո երդիկից ծուխ չբարձրանա, անսերունդ մնա: Հարսի երեսը ծածկում էին յոթ քողով, տանից հանելիս կոշիկի մեջ գարնանացան ցորեն լցնում: Խանդութի երկու ծամերի և կրծքից երկու սառնորակ աղբյուր բխելու ավանդությունը, մի շարք թռչունների, հատկապես աղավնու պաշտամունքը որպես սուրբ հոգու խորհրդանիշ, պղնձից պատրաստված աղավնու բերանից մյուռոն կաթեցնելը, կորցրած ապրանքը գտնելը, երեխայի սեռը գուշակելը, աղավնի թռցնելը և այլն:

Աշխատության մեջ նշանակալից էջեր են զբաղեցնում Սուրբ Սարգսի պաշտամունքը, խերով ու շառով ոտքով գուշակությունը, խաչի, սրբի դուլերի, չոփչի կանանց մասին գրառումները, աղոթքի միջոցով հիվանդին բուժելը, գարի գցելը, ծննդկանի ականջի տակ խոճկոր ճղացնելը, գերեզմանից ծննդկանի դին հանելն ու այրելը, մի պտղուց մոխիր պահելը, հալի, տուրի, հաշտաքողի, հոգեհանի մասին եղած հավատալիքները: Մի շարք ժողովրդական տոների՝ Կաղանդ, Համբարձում, Սուրբ Սարգիս, մասին եղած հաղորդումները, ծաղկամոր, ծաղկաչափի մասին նյութերը: Ուշագրավ են չար աչքի, կարճքի, հոգեվարքի, լավի, գեղեցիկի, երդիկից պարկ կախելու, աղի բլիթ ուտելու և ջուր չխմելու մասին եղած հավատալիքները: Կարևոր են երիտասարդական միությունների, Թուխ Մանուկ հուշարձանների, գերեզմանների պաշտամունքի մասին եղած վկայությունները:

Չափազանց ուշագրավ են գեղարվեստական գրականությունից քաղված հայ բանարվեստի նմուշները. դարձվածքներն ու բառակապակցությունները, ասացվածքները, առածներն ու առակները, անեծքները և այլն, որոնք ազգագրական նյութերի հետ յուրատեսակ համ ու հոտ են հաղորդում շարադրանքին՝ այն դարձնելով հետաքրքիր ու գրավիչ: Ժողովրդական ավանդական կենցաղի, լեզվի, բարբառների խորս իմացությունը նպաստել են ազգագրական նյութերի յուրացմանն ու տարածմանը: Գեղարվեստը շաղախված է ժողովրդական բանահյուսությամբ, ներկայացված է արվեստի մակարդակով:

Ա. Պետրոսյանի գրախոսվող աշխատանքը գրված է գիտական պատշաճ մակարդակով, կարդացվում է չթուլացող հետաքրքրությամբ: Այն կազմում է «Հայ ազգագրության պատմություն» ընդհանուր կուրսի մի հատվածը:

Է. Մինասյան

Պատմ. գիտ. դրկտ., պրոֆեսոր

